ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. **Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը**

Նիստի նախագահ, քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս. Գալստյան

Հարգելի գործընկերներ քիմիայի ֆակուլտետի գիտխորհրդի արտահերթ նիստը պայմանավորված է Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման կարգով: Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Նարինե Անժելոյի Դուրգարյանը: Մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող պահանջներին: Նրա թեկնածությունը քննարկվել է ինչպես Օրգանական քիմիայի ամբիոնում, այնպես էլ մրցութային հանձնաժողովում և երաշխավորվել է հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ –Գ.Ս.Գրիգորյան

Անդամներ- Լ.Պ.Համբարձումյան, Հ.Աղեկյան

Ընտրություններից հետո ֆակուլտետի խորհուրդը (16-անդամներից ներկա էին 16-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 16 անդամներ:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար՝ Նարինե Անժելոյի Դուրգարյանին կողմ քվեարկել են խորհրդի-16 անդամ, դեմ-չկա, անվավեր քվեաթերթ- չկա:

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշ-վետվությունը և Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված համարել քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանին:

Նիստի նախագահ,

Քիմիայի ֆակուլտետի դեկան

քիմ.գիտ.թեկնածու Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար

քիմ.գիտ.թեկնածու, դոցենտ Մ.Ա.Սամվելյան